

Արձանագրություն №8/2012-2013

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2013թ. մայիսի 30-ին տեղի ունեցած թիվ 8 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 75-ը (յոթանասունհինգ):

Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. **Ֆակուլտետային ամբիոնի վարիչի ընտրության մասին ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում** (Ձեկ.՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյան, բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյան):
2. **<<ԵՊՀ-ում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների 2013-2014 թթ. ծրագրի >> հաստատում** (Ձեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան):
3. **Տեղեկատվություն 2013/14 ուստարվա առկա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելության դիմումների շարժի մասին:** (Ձեկ.՝ պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյան)
4. **ԵՊՀ գիտական խորհրդին կից ձեռնարկությունների հետ համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի աշխատակարգի հաստատում** (Ձեկ.՝ պրոռեկտոր Ռ. Լ. Մարկոսյան):
5. **Ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը նոր խմբագրությամբ հաստատելու մասին** (Ձեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):
6. **ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի գործունեության մասին** (Ձեկ.՝ կենտրոնի տնօրեն Դ. Ա. Հովհաննիսյան):
7. Ընթացիկ հարցեր

Պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանն առաջարկեց օրակարգից հանել ԵՊՀ քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոնի գործունեության մասին հաղորդումը՝ պայմանավորված օրակարգի հազեցվածությամբ: Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին. - **Ֆակուլտետային ամբիոնի վարիչի ընտրության մասին ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատման մասին:**

ԵՊՀ գիտական խորհրդի հումանիտար և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովների նախագահներ Գ. Հ. Պետրոսյանը և Ա. Ա. Սահակյանը

ներկայացրեցին ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշումներով ամբիոնի վարիչ ընտրված դոցենտներին և պրոֆեսորներին՝ նշելով զբաղեցրած պաշտոնը, հավակնած պաշտոնը, տվյալներ նրանց գիտամանկավարժական գործունեության վերաբերյալ: Գ. Պետրոսյանը նշեց, որ մրցութային հանձնաժողովը ետ է ուղարկել միայն Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդ Լ. Բ. Չուգասզյանի գործը՝ այնտեղ նրա գիտական կոչման մասին որևէ վկայության բացակայության պատճառով:

Ֆակուլտետների գիտական խորհուրդների կողմից ընտրված և ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացված ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդներն էին.

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքի վայրը, պաշտոնը (երբեմնից)	Գիտական աստիճանը, կոչումը (մասնագիտ. շիֆր)	Ինչ պաշտոնի համար է դիմել
1	Հարությունյան Էդվարդ Արզումանի	Սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի վարիչ (2001թ.-ից)	Փիլ. գիտ. դոկտոր (2001թ. Թ.00.04- սոց. փիլ., բարոյագիտություն) պրոֆ. – 2006թ.	Սոցիալական փիլիսոփայության և բարոյագիտության ամբիոնի վարիչի
2	Զաքարյան Մելյան Արտուշայի	Փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչ (2001թ.-ից)	Փիլ. գիտ. դոկտոր (2000թ. Թ.00.02- փիլ. պատմություն) պրոֆ. – 2005թ.	Փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչի
3	Գաբրիելյան Յուրիկ Միշայի	Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչ (2001թ.-ից)	Բան. գիտ. դոկտոր (2002թ. Ժ.02.07 – գերման. լեզուներ) պրոֆ. – 2006թ.	Գերմանական բանասիրության ամբիոնի վարիչի
4	Հարությունյան Զավեն Հրանտի	Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչի պաշտոնակատ. (2009թ.-ից)	Մանկ. գիտ. թեկ., (1987թ. Ժ.02.08 – ռոմանական լեզուներ), դոցենտ – 2004թ.	Ֆրանսիական բանասիրության ամբիոնի վարիչի
5	Բաղդասարյան Հասմիկ Գրիգորի	Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչի պաշտոնակատ. (2011թ.-ից)	Բան. գիտ. թեկ. (1996թ. Ժ.02.08 ռոմանական լեզուներ), դոցենտ – 2004թ.	Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչի
6	Այվազյան Նորիկ Անուշավանի	Սահմանադրական Իրավունքի ամբիոնի վարիչ (1989թ.-ից)	Իրավ. գիտ. դոկտոր (1988թ. – ԺԲ.00.02 – սահման. իրավ) պրոֆ. – 1990թ.	Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչի
7	Վաղարշյան Արթուր Գրիշայի	Պետութ. և իրավունքի տեսութ. և պատմ. ամբիոնի վարիչ (2005թ.-ից)	Իրավ. գիտ. թեկ. (1997թ. – ԺԲ.00.01-պետ. և իրավ. տես. և պատմ.), դոցենտ-2004թ.	Պետության և իրավունքի տեսության և պատմութ.-յան ամբիոնի վարիչի
8	Դիլբանյան Սամվել Աղվանի	Քրեական դատավար. և կրիմինալիս. ամբիոնի վարիչ (2006թ.-ից)	Իրավ. գիտ. դոկտոր (2011թ. ԺԲ.00.04 – քրեական դատավար.) դոցենտ – 2004թ.	Քրեական դատավարութ. և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչի
9	Ենգոյան Աշոտ Փայլակի	Քաղաք. գիտ. պատմ. և տեսության ամբիոնի վարիչ (2010թ.-ից)	Քաղաք. գիտ. դոկտոր (2012թ. ԻԳ.00.01 – քաղ. գիտ. պատմ. և տեսութ.), դոցենտ – 2006թ.	Քաղաքական գիտության պատմության և տեսութ.-յան ամբիոնի վարիչի
10	Խաչատրյան Արտակ Վարապետի	Սոց. աշխատ. և սոց. տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ (2006թ.-ից)	Փիլ. գիտ. թեկ. (1989թ. – Թ.00.00 - փիլիսոփայություն), դոցենտ – 2003թ.	Սոցիալ. աշխատանքի և սոցիալ. տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի
11	Սահակյան Արմեն Կոլյայի	Սոցիոլոգիայի պատմութ. և տեսության ամբիոնի վարիչ (2011թ.-ից)	Սոց. գիտ. դոկտոր (2008թ. – ԻԲ.00.01 – սոցիոլոգիայի պատմ. և տես), դոցենտ-2000թ	Սոցիոլոգիայի պատմութ.-յան և տեսության ամբիոնի վարիչի
12	Հակոբյան Լևոն Գեորգիի	Ռուս գրականության ամբիոնի վարիչ (2006թ.-ից)	Բան. գիտ. թեկ. (1992թ. – Ժ.01.03- ռուս գրականութ.), դոցենտ – 2006թ.	Ռուս գրականության ամբիոնի վարիչի
13	Խոջումյան Բելլա Սուրենի	Ռուսաց լեզվի ամբիոնի (բնագիտ. ֆակուլտ. համար) վարիչ (2004թ.-ից)	Բան. գիտ. թեկ. (1984թ. – Ժ02.04 – սլավոն. լեզուներ), դոցենտ - 1989	Ռուսաց լեզվի ամբիոնի (բնագիտ. ֆակուլտետներ-ի համար) վարիչի
14	Ավետիսյան Հայկ Գրիգորի	Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչ (2009թ.-ից)	Պատմ. գիտ. դոկտոր (2003թ. – Ի.000.03 - հնագիտություն), պրոֆեսոր – 2009թ.	Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչի

15	Մարգարյան Հայրապետ Գևորգի	Հայաստանի հարակից երկրների պատմության ամբ. վարիչ (2007թ.-ից)	Պատմ. գիտ. դոկտոր (1996թ. – Է.00.01 – Հայոց պատմու- թյուն), պրոֆեսոր – 2003թ.	Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի վարիչի
16	Ստեփանյան Ալբերտ Անդրանիկի	Համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ (1999թ.-ից)	Պատմ. գիտ. դոկտոր (1992թ. – Է.00.02 – համաշխ. պատմ.) պրոֆ. – 2006թ.	Համաշխարհային պատմության ամբիոնի վարիչի
17	Աթաբեկյան Վարուժան Մելքոնյանի	Հանրահանձվի և երկրաչափ. ամբիոնի պրոֆեսոր 2012թ.-ից	Ֆիզմաթ. գիտ. դոկտոր (2011թ. – Ա.01.00 – մաթեմա- տիկա), պրոֆեսոր – 2012թ.	Հանրահանձվի և երկրաչափության ամբիոնի վարիչի
18	Օհանյան Վիկտոր Վարդի	Հավանական. տեսութ. և մաթ. վիճակագր. ամբ. վարիչ (2011թ.-ից)	Ֆիզմաթ. գիտ. դոկտոր (1999թ.-Ա.01.05 – հավանա- կան. տեսութ. և մաթեմատ. վիճակագր), պրոֆ. – 2004թ.	Հավանականությունների տեսության և մաթեմատի- կական վիճակագրության ամբիոնի վարիչի
19	Հայրապետյան Հրաչիկ Մերգոյի	Մաթ. անալիզի և ֆունկ- ցիաների տեսության ամբ. վարիչ (2012թ.-ից)	Ֆիզմաթ. գիտ. դոկտոր (1994թ. – Ա.01.01 – մաթեմատ. անալիզ), պրոֆեսոր – 2004թ.	Մաթեմատիկական անալիզի և ֆունկցիաների տեսության ամբ. վարիչի
20	Մարգարյան Սամվել Վլադիմիրի	Մեխանիկայի ամբիոնի վարիչ (2007թ.-ից)	Ֆիզմաթ. գիտ. դոկտոր (1997թ. – Ա.02.00- մեխանիկա), պրոֆ. – 2002թ.	Մեխանիկայի ամբիոնի վարիչի
21	Ալեքսանյան Արա Անանիկի	Դիսկրետ մաթեմ.-ի և տեսական ինֆորմ.-ի ամբ. վարիչ (1996թ.-ից)	Ֆիզմաթ. գիտ. դոկտոր (1991թ. Ա.01.07 – հաշվող. մաթեմ), պրոֆ. – 2011թ.	Դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատի-կայի ամբիոնի վարիչի
22	Վարդանյան Պողոս Հովհաննեսի	Կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ (2001թ.-ից)	Կենս. գիտ. դոկտոր (1991թ. Գ.00.02 – կենսաֆիզիկա), պրոֆ.-2002	Կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչի
23	Գրիգորյան Վառլեն Վաղարշակի	Էկոլոգիայի և բնության պահպանության ամբ. վարիչ (1997թ.-ից)	Կենս. գիտ. դոկտոր (1991թ. –Գ.00.11 – էկոլոգիա), պրոֆ. – 2004թ.	Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի վարիչի
24	Նանսգոյան Սիրանուշ Գերասիմի	Բուսաբանության և սնկաբանության ամ- բիոնի վարիչ (2005թ.-ից)	Կենս. գիտ. դոկտոր (1998թ. –Գ.00.03 – բուսաբանություն) պրոֆ. – 2010թ.	Բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչի
25	Փիրույան Գևորգ Պետրոսի	Էկոլոգիական քիմիայի ամբիոնի վարիչ (2007թ.- ից)	Տեխ. գիտ. դոկտոր (1997թ.ԻՊ.03.04) պրոֆ.- 2003թ.	Էկոլոգիական քիմիայի ամբիոնի վարիչի
26	Մարգարյան Շիրազ Ալեքսանդրի	Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ (2000թ.-ից)	Քիմ. գիտ. դոկտոր (1989թ. Բ.00.04 – ֆիզիկական քիմիա) Պրոֆ. – 2002թ.	Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչի

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը նիստի մասնակիցներին առաջարկեց հարցեր ուղղել ամբիոնի վարիչի մրցույթի մասնակիցներին: Հարցեր չհնչեցին:

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Մուրադյան Սամվել Պարզևի (նախագահ)
2. Մինասյան Ռոբերտ Սարիբեկի
3. Գասպարյան Սեդա Քերոբի
4. Ավետյան Քրիստինե Վարդանի
5. Ղափլանյան Վարդան Արթուրի

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 75 անդամները: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Մուրադյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	անվավեր
1.	Հարությունյան Էդվարդ Արզումանի	67	3	5
2.	Զաքարյան Մելրան Արտուշայի	69	1	5
3.	Գաբրիելյան Յուրիկ Միշայի	62	9	4
4.	Հարությունյան Զավեն Հրանտի	59	9	7

5.	Բաղրասարյան Հասմիկ Գրիգորի	69	3	3
6.	Այվազյան Նորիկ Անուշավանի	22	44	9
7.	Վաղարշյան Արթուր Գրիշայի	64	8	3
8.	Դիրանյան Սամվել Աղվանի	65	5	5
9.	Ենգոյան Աշոտ Փայլակի	68	3	4
10.	Խաչատրյան Արտակ Կարապետի	71	1	3
11.	Սահակյան Արմեն Կոլյայի	70	2	3
12.	Հակոբյան Լևոն Գեորգիի	69	2	4
13.	Խոջումյան Բելլա Սուրենի	67	4	4
14.	Ավետիսյան Հայկ Գրիգորի	70	2	3
15.	Մարգարյան Հայրապետ Գևորգի	71	1	3
16.	Ստեփանյան Ալբերտ Անդրանիկի	65	7	3
17.	Աթաբեկյան Վարուժան Մերյոժայի	69	3	3
18.	Օհանյան Վիկտոր Կարոյի	70	2	3
19.	Հայրապետյան Հրաչիկ Մերգոյի	66	5	4
20.	Մարգարյան Սամվել Վլադիմիրի	69	3	3
21.	Ալեքսանյան Արա Անանիկի	61	9	5
22.	Վարդևանյան Պողոս Հովհաննեսի	72	0	3
23.	Գրիգորյան Կառլեն Վաղարշակի	69	3	3
24.	Նանագյուլյան Սիրանուշ Գերասիմի	67	5	3
25.	Փիրումյան Գևորգ Պետրոսի	68	4	3
26.	Մարգարյան Շիրազ Ալեքսանդրի	68	4	3

Որոշեցին. – 1.1 Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

1.2. Հաստատել վերոնշյալ պրոֆեսորների և դոցենտների (բացառությամբ Ն. Ա. Այվազյանի)՝ ամբիոնի վարիչ ընտրվելու վերաբերյալ ԵՊՀ ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշումները և ընտրված ամբիոնի վարիչների հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

1.3. Չհաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը՝ Նորիկ Անուշավանի Այվազյանին ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու վերաբերյալ:

2. **Լսեցին.** - ԵՊՀ-ում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների 2013-2014 թթ. ծրագրի հաստատման մասին: Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը կարևորեց Համալսարանում հակակոռուպցիոն միջոցառումները համակարգված իրականացնելու անհրաժեշտությունը՝ նշելով, որ խնդիրը տեղ է գտել ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրում: Այս առնչությամբ ներկայացնելով ծրագրի հիմնական դրույթները՝ Ա. Միմոնյանը դրա արդյունավետությունը պայմանավորեց համալսարանականների ակտիվ մասնակցության հանգամանքով:

Արտահայտվեցին. – Պրոռեկտոր Ռ. Լ. Մարկոսյանը, իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ս. Ղազինյանը:

Որոշեցին. – Հաստատել ԵՊՀ-ում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների 2013-2014 թթ. ծրագիրը:

3. **Լսեցին.**- Տեղեկատվություն 2013/14 ուստարվա առկա ուսուցմամբ բակալավրիատի ընդունելության դիմումների շարժի մասին: Պրոռեկտոր Ա. Կ. Գրիգորյանը ներկայացրեց ըստ մասնագիտությունների և ըստ առաջին հայտերի դիմորդների շարժը մայիսի 29-ի դրությամբ:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Սիմոնյանն անդրադարձավ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դիմորդների նվազ քանակի պատճառներին՝ առանձնացնելով տվյալ սերնդին բնորոշ ծնելիության ցածր մակարդակի հանգամանքը, Հայաստանում ամերիկյան համալսարանի կողմից մի շարք մասնագիտությունների գծով բակալավրի ծրագրեր բացելու հանգամանքը:

Որոշեցին. – ընդունել ի գիտություն:

4. **Լսեցին.** – ԵՊՀ գիտական խորհրդին կից ձեռնարկությունների հետ համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի աշխատակարգի հաստատման մասին: Պրոռեկտոր Ռ. Լ. Մարկոսյանը նշեց, որ աշխատակարգի բացի խնդիրների ու գործառույթների բաժնից, մնացած բոլոր բաժինները նույնական են նախորդ աշխատակարգերի բաժինների հետ: Ռ. Մարկոսյանը կանգ առավ նաև ԵՊՀ գիտխորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովում սույն աշխատակարգի նախագծի բանավեճի տեղիք տված դրույթներից մեկի վրա, որը վերաբերում էր հանձնաժողովի կողմից ԵՊՀ տարբեր ստորաբաժանումների համագործակցությունը համակարգելու խնդրին:

Արտահայտվեցին. – Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը պարզաբանեց իր դիրքորոշումը՝ նշելով, որ համակարգել բայի բովանդակությունը կարող է հանձնաժողովի համար ստեղծել այնպիսի մի պարտականություն, որը հետագայում նույն հանձնաժողովի համար դժվար կլինի իրականացնել:

Որոշեցին. – Հաստատել ԵՊՀ գիտական խորհրդին կից ձեռնարկությունների հետ համագործակցությունը ապահովող մշտական հանձնաժողովի աշխատակարգը:

5. **Լսեցին.** – **Ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը նոր խմբագրությամբ հաստատելու մասին:** Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյանը ներկայացրեց առաջարկվող փոփոխությունները՝ առանձնակի կանգ առնելով այն հանգամանքի վրա, որ արցախյան պատերազմին մասնակցած ազատամարտիկների երեխա ուսանողներին մինչ այժմ զեղչը կատարվել է ռեկտորի որոշմամբ, թեև այս կետ մինչ օրս չի մտել կանոնակարգի մեջ: Ըստ այդմ առաջարկ կա կանոնակարգել այդ հանգամանքը: Մյուս կարևոր խնդիրը վերաբերում էր նրան, որ մեկ ընտանիքից վճարովի համակարգում սովորող երկու ուսանողներին զեղչ տրամադրելու հանգամանքը միշտ չէ, որ ենթադրում է անվճարունակություն, ուստի առաջարկ կա նվազեցնել վարձավճարի զեղչի չափը:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Սիմոնյանը նշեց, որ կանոնակարգի հիմնական խնդիրն է վերհանել այն ուսանողներին, որոնք սոցիալական պայմանների բերմամբ են դժվարանում վճարել ուսման վարձը: Այս հարցում, անշուշտ, կարևոր է կուրատորների կողմից տարվող աշխատանքները: Ելույթ ունեցան և հարցերով հանդես եկան նաև պրոռեկտոր Ա. Գրիգորյանը, ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Ավագյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Վարդանյանը, ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Ն. Մարտիրոսյանը, միջազգային կրթական կենտրոնի տնօրեն Լ. Շեկյանը, ասպիրանտ Ն. Մելքոնյանը:

Որոշեցին. – **Ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգը հաստատել նոր խմբագրությամբ:**

6. **Լսեցին.** – **ընթացիկ հարցեր**

6.1 **Լսեցին.** – Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի վարիչի պարտականությունները դադարեցնելու կապակցությամբ պրոֆեսոր Յու. Մովսիսյանին նույն ամբիոնի պատվավոր վարիչի կոչում շնորհելու մասին: Ֆակուլտետի դեկան Ա. Սահակյանը ներկայացրեց Յու.

Մովսիսյանի վաստակը ամբիոնում մասնագետներ պատրաստելու գործում, նրա ձեռքբերումները կրթության և գիտության բնագավառում:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Միմոնյանը կարևորեց երիտասարդ կադրերի համար ուղի հարթելու գործելաձևը և բարձր գնահատեց այս առնչությամբ Յու. Մովսիսյանի վարմունքը:

Որոշեցին. – Պրոֆ. Յուրի Մովսեսի Մովսիսյանին շնորհել ԵՊՀ հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի պատվավոր վարիչի կոչում:

6.2 Լսեցին. - Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնի դոցենտ Գևորգ Հաջյանի <<Ալիքային պրոցեսների տեսության հիմունքներ>> վերնագրով դասագիրքը հրատարակության երաշխավորելու և նշված դասագիրքը որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը միջնորդելու մասին: Ռեկտոր Ա. Միմոնյանը նշեց, որ նշված խնդրով ԵՊՀ գիտխորհրդին է դիմել ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհուրդը. առկա են ամբիոնի նիստի դրական եզրակացությունը, ինչպես նաև ոլորտի մասնագետների երաշխավորությունները:

Որոշեցին. -

1. Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնի դոցենտ Գևորգ Հաջյանի <<Ալիքային պրոցեսների տեսության հիմունքներ>> վերնագրով դասագիրքը երաշխավորել հրատարակության:
2. Միջնորդել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը՝ նշված դասագիրքը որպես բուհական դասագիրք ճանաչելու հարցում:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Միմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

04.06.2013թ.